

13.698

9.09.2013

25 SEP 2006

Խ. Ս. Շ. Մ.

Ա. Ս. Ֆ. Խ. Շ.

ԿԵՆՏՐԱԼԻԶԱՐ

ԿԵՆՏՐԱԼԻԶԱՐ

1926 թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

24. 10

ՄԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

I. ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՁԵՎ № № 4, 5, ՅԵՎ 5 Ա)

1. Հրահանգ գյուղական վայրերի ծխերի ցուցակ (մե. № 4) լրացնելու համար

«Գյուղական վայրերի ծխերի ցուցակ» կազմվում է միայն գյուղական վայրերում այն եւ յուրաքանչյուր բնակավայրի համար առանձին, վորն լրացնելու ժամանակ ցուցակադրողն ուղղվում է իր ձեռքի տակ յեղած գյուղխորհուրդների և կամ զավգիճբյուրոների միջոցով կազմած անատերերի ցուցակից, անձնական թերթիկներից և հստակապես տված հարցերի պատասխաններից:

«Գյուղական վայրերի ծխերի ցուցակը» համարակալվում է ցուցակադրողի չրջանի սահմաններում ըստ կարգի:

«Գյուղական վայրերի ծխերի ցուցակ»—ներում մտցնվում են տվյալ բնակավայրում 1926 թ. Դեկտեմբերի 17-ին բոլոր ներկա յեղող ծուխերին (ամեն մեկն առանձին տողի վրա):

Առանձին ծուխ մարդահամարի ժամանակ հաշվում է այն անձանց խումբը, վորոնք կապված են ազգակ-

100
1389

ցությամբ, ապրում են միասին, ունեն ընդհանուր յել և մուտքի բյուջէ:

Վարձու բանվոր ունեցող ծուխերի կազմում հաշվել այն բանվորներին և նրանց ընտանիքի անդամներին, վորոնք այդ տնտեսութեաններում են ապրում:

Յուցակում մտցվում են բոլոր ծուխերը, անկախ այն բանից, թե նրանք զբաղվում են կամ չեն զբաղվում գյուղատնտեսութեամբ և ապրում են սեփական թե վարձու տան մեջ:

Վարձակալները (այդ թվում և միայնակները) վորոնք ապրում են գյուղական տնտեսութեաններին մեջ մտցվում են «գյուղական վայրերի ծխերի ցուցակում» վորպես առանձին ծուխեր. (առանձին տողի վրա):

Յուրաքանչյուր առանձին ծուխը գրվում է «գյուղական վայրերի ծխերի ցուցակում» առանձին տողի վրա հատուկ հերթական համարով, տվյալ բնակավայրի սահմաններում, բոլոր վորում յեթե այս կամ այն բնակավայրի բոլոր ծուխերը չեն տեղավորվում մի թերթիկի վրա անհրաժեշտ է վերջնել լրացուցիչ թերթիկներ շարունակելով ծուխերի հերթական համարները: Այսպիսի լրացուցիչ թերթիկը նշվում են նաև լիտերով. որինակ՝ 1 ա, 1 բ, 2 ա, 2 բ, 2 գ, և այլն:

Ծխի գլխավորի ազգանունը, անունը և հայրանունը» սյունակում վորպես ծխի գլխավորի գրվում է այն անձը, վորը կանգնած է առանձին ծուխի գլուխ:

Ծխի գլխավորի ազգութեանը» սյունակը լրացվում է համապատասխան անձնական թերթիկի 4-րդ հարցի պատասխանի հիման վրա:

Տնտեսութեան տիպը («գյուղական, ալ») , սյունակը նշանակել «գյուղական» այն ծուխերի վերաբերմամբ, վորոնց գլխավոր կամ յերկրորդական (կողմնակի) զբաղմունքն է հանդիսանում գյուղատնտեսութեան վորեւէ ճյուղը, իսկ «ալ» հաշվել մնացած ծուխերը:

Մարդահամարի ժամակակ կազմված անձնական թերթիկների թիվը «արական, իգական, յերկու սեռից» սյունակները լրացվում են տվյալ ծուխի համապատասխան թերթիկները հաշվելուց հետո:

Մարդահամարի ժամանակ կազմված անձնական թերթիկների թիվը պետք է ճշտորեն համապատասխանի տվյալ բնակավայրի ներկա յեղող բնակչութեան թվի հետ. բոլոր վորում անհրաժեշտ է հատուկ ուշադրութեամբ դարձնել, վոր ժամանակավորապես ապրող բնակչութեանը անպայման ցուցակագրվի և չմոռացվի ծխերի ցուցակի հաշվի մեջ մտցնել:

«1926 թ. ծնվել են յերկու սեռից, մեռել են յերկու սեռից» սյունակները լրացվում են 1926 թ. որացույցային տարում (հունվարի 1-ից մինչև Դեկտեմբերի 17-ը) տվյալ ծուխի մեջ ծնված և մեռածների մասին հարցուփորձերի հիման վրա: Այս հարցուփորձը հարկավոր է շատ խնամքով կատարել, աշխատելով ճիշտ տեղեկութեաններ ստանալ յուրաքանչյուր ծուխի համար, թե այդ ծուխի մեջ 1926 թ. յերկու սեռից քանի հոգի ծնվել են և քանի հոգի մեռել:

«Նշել տնայնագործական արհեստների մասին» սյունակը. տնայնագործական արհեստների անվան տակ այստեղ պետք է հասկանալ գյուղական տնտեսու-

թյան մեջ վաճառքի համար պատրաստվող իրեզները: Հայաստանում ամենից շատ տարածված են հետևյալ տնայնագործական արհեստները՝ գորգագործություն, շալագործություն, թաղիքագործություն, դամբյուղագործություն, պղնձագործություն, կավագործություն, փայտագործություն և այլն: Յեթե ծուխի մեջ տնայնագործությունը պրաղվում են, վորը պետք է ուշադրություն պարզել տվյալ ծուխի անդամների անձնական թերթիկները լրացնելու ժամանակ, (տես «ինչպես գրել անձնական թերթիկների պատասխանները հրահանգի 3-րդ մասի 12-րդ հարցը»), այն ժամանակ «նշել տնայնագործական արհեստների մասին», սյունյակում նշանակվում է թե իրոք, ինչ տնայնագործական աշխատանքով է զբաղվում տվյալ ծուխը. որինակ՝ գորգագործություն, շալագործություն, թաղիքագործություն, դամբյուղագործություն, պղնձագործություն, կավագործություն, փայտագործություն և այլն: Տնայնագործության մասին այդ նշումը կատարվում է «անձնական թերթիկի» 12-րդ հարցի պատասխանների հիման վրա:

2. Գյուղական վայրերի ցուցակագրողի վերստուգողական քերթիկ. — (ձև № 5)

«Վերստուգողական թերթիկը» լրացվում է ցուցակագրողի կողմից իր՝ ցուցակագրողի շրջանի «գյուղական վայրերի ծխերի ցուցակի» տվյալներով:

Մարդահամարի ժամանակ ցուցակագրված ծխերի թիվը՝ սյունակը լրացնելիս պետք է նկատի ունենալ վոր ծուխ խոսքն այստեղ հասկացվում է վորպես առանձին տնտեսական միավոր, ուստի տվյալ բնակավայրի

ծուխերի թիվը և նրանց դասավորումը «գյուղական» և «այլ» տիպերի պետք է համապատասխանի «գյուղական վայրերի ծխերի ցուցակի» մեջ նշանակվածներին:

«Գյուղական վայրերում» վերստուգողական թերթիկը լրացնում են նաև հրահանգի ներքև և վիճակագրական շրջանի վարիչները, ըստ վորում առաջինները լրացնում են «վերստուգողական թերթիկի» համապատասխան սյունակները՝ գրելով յուրաքանչյուր ցուցակագրողի շրջանի տվյալներ առանձին տողի վրա, իսկ յերկրորդները գրում են առանձին տողի վրա յուրաքանչյուր հրահանգի շրջանի տվյալները:

3. Բաղաճային վայրերի ցուցակագրողի վերստուգողական քերթիկ. — (ձև № 5ա)

Բաղաճային վայրերի ցուցակագրողի վերստուգողական թերթիկի բոլոր սյունյակները, վորոնք վերաբերվում են ցուցակագրողի շրջանին, լրացվում են համաձայն «կալվածաթերթի» տվյալներին. այսինքն կալվածքի տիրոջ ազգանունը ըստ «կալվածաթերթի» 2ա հարցի պատասխանի. փողոց՝ նրբափողոց, հրապարակ, տան համար, համաձայն հասցեյի մասին. բնակելի կացարանների թիվը համաձայն 12-րդ հարցի. կալվածքում կազմված անձնական թերթիկների և ընտանեկան թերթիկների թիվը համաձայն 13-րդ աղյուսակին կից հարցերի պատասխաններին:

II. ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՐԱՎԱՆԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

1. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ՅԵՎ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐԾԱԿԱՆ ՀՐԱՎԱՆԳԻ (ՁԵՎ № 6-ի)

1. Ազգաբնակչության սպառնցուցիչ հաշվառումը

ապահովելու համար մարդահամարը ղեկավարող մարմինները պետք է հատուկ ուշադրութիւն դարձնեն և առանձնապես հետեւեն, վորպէսզի մարդահամարի ժամանակ բնակավայրերը կամ մինչև իսկ տնատեղերը բաց չթողնվեն (որինակ՝ խուտորները, ագարակները, և այլն), վորոնք գտնվում են քաղաքային հողերի վրա և այլ չեն մտած քաղաքների կազմում, ուստի յենթակային մարդահամարի վորպէս գյուղական վայրերի:

2. Կալանատեղերում, ուղղիչ տներում և աշխատանքի ազարակում Ն. Գ. Ժ. Կ. —ի № 734 չըջարերականով կալանապետները նշանակված են վորպէս ցուցակագրողներ: Նրանց հրահանգումը, նյութերի հանձնումը, ստացումը և աշխատանքի ղեկավարութիւնն ու հսկողութիւնն այն հրահանգիչների պարտականութիւնն են, վորոնց շրջանում վոր գտնվում և տվյալ կալանատեղը (տես ձև № 6, կետ 53):

3. Կալանատեղերում, ուղղիչ տներում և աշխատանքի ազարակում անձնական թերթիկ լրացվում և շորինակով, վորոնցից մեկի 12-րդ և 13-րդ հարցերը չեն լրացվում, իսկ 14-րդ հարցում գրվում և «կալանավոր», իսկ Բ. —ի № 12 և 13 հարցերը լրացվում են: Հարցաթերթիկների առաջին որինակները, վորոնց վրա նշանակված և «կալանավոր» հանձնվում են հրահանգչին, իսկ Բ. պատճենները 12-րդ և 13-րդ հարցերի լրացումով կալանապետն իր զծով ուղարկում և Ն. Գ. Ժ. Կ.:

Հրահանգիչները կալանապետներից նյութերը ստանալիս ստուգում են բոլոր հարցերը և մասնավորապես 14-րդ հարցի պատասխան «կալանավոր» բառը, իսկ յեթե սխալմամբ լրացված են նույնպէս 12-րդ և 13-րդ հարցերը վերջիններս վերադարձնում և կալանապետին ուղղելու համար:

4. Հիվանդանոցներում, մսուրներում և մանկատներում այդ հիմնարկների կողմից առանձին ցուցակագրող չի նշանակվում, այլ մարդահամարը տեղի կունենա ընդհանուր կարգով: Միայն թե ցուցակագրողն այդ հիմնարկները մտնելիս, վորպէս ոժանդակ նյութ ոգտրվում և պատրաստի ցուցակներից և ստուգում թե արդյոք 17-ին ղեկամբերի բոլոր ներկա յեղածների համար լրացրել և թերթիկ թե վոչ, իսկ վերջացնելուց հետո վերցնում և ստորագրութիւնն այդտեղ բոլորին ցուցակագրած լինելու մասին:

Այս կետում հիշված հիմնարկները ցուցակագրվում են ղեկամբերի 17-ին:

5. Հիվանդների, մսուրի յերեխաների ու մանկատան սաների անձնական թերթիկների 12-րդ և 13-րդ հարցերը չեն լրացվում, իսկ 14-րդում գրվում են «հիվանդ», «մսուրի յերեխա», «մանկատան սան»:

Այդ հիմնարկներում գտնված ուրիշ բնակիչների համար անձնական թերթիկների բոլոր հարցերն էլ լրացվում են:

6. Ձմեռանոցների մարդահամարի կարգը վորոշվում և Հայաստանում (հրահանգ № 6-ի կետ 4-ի հիման վրա) հետևյալ ձևով:

ա) Ամեն մի ձմեռանոց ցուցակագրվելու յե վորպէս առանձին բնակավայր և գյուղական ցուցակագրողի վերատուգողական թերթիկում գրավելու յե միտող, անկախ նրանից, թե բնակիչները մշտակյացներ են թե ժամանակավոր:

Ցուցակագրվելու յեն նույնիսկ այն ձմեռանոցներն վորպէս առանձին բնակավայր, ուր կա թեկուզ մի հովիվ:

բ) Ձմեռանոցները կազմում են առանձին հրա-

Հանգչի և ցուցակագրողների շրջանները, կամ միացվում են ուրիշ շրջանների համաձայն կազմված ցանցի, վորն հաստատվել է մարդահամարի խորհրդակցութեանը (նոյեմբերի 17-ին) կողմից Յերեանում:

գ) Ձմեռանոցներում գրվում են թե ժամանակավոր և թե մնայուն բնակիչները, յեթե նրանք ներկային յեղել այնտեղ լույս 17-ի գիշերը: Ամեն մի ծուխից ներկա յեղողների համար ծխերի ցուցակում (№ 4) հատկացվում է մի տող:

դ) Մայր գյուղում արգելվում է գրել ձմեռանոց մեկնածներին, թեկուզ նրանք ժամանակավոր բնակիչներ լինեն ձմեռանոցների համար:

յ) Ձմեռանոցի համար ծխերի ցուցակի (№ 4) ծանոթութեան բաժնում պետք է ցույց տալ մայր գյուղի տնունը այն ծխերի գիմաց, վորոնց մեկ մասը գտնվում է ձմեռանոցում, իսկ մյուս մասը մայր գյուղում:

զ) Դաշտերում անասունների հետ ապրող հովիվները ցուցակագրվում են իրենց մշտական բնակավայրերում:

է) Ինչպես գյուղում, նույնպես ձմեռանոցներում ցուցակագրողն աշխատանքը ավարտելուց հետո վաղերացնել է տալիս ծխերի ցուցակը (№ 4) ձմեռանոցների բնակիչներից վորեւ մեկին (գլխավորին):

2. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ՅԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՀՐԱՅԱՆԳԻ (ՁԵՎ № 7)

ՀԱՎԵԼՎԱԾ 1-ԻՆ ՄՍՍԻ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ)

Հրահանգի 7-րդ կետի առթիվ —

Մարդահամարի հիմնական խնդիրը հանգիստանում է ազգաբնակչութեան լրիվ հաշվառումը: Ուստի ան-

հրաժեշտ է ուշք դարձնել վորպեսզի այն անձինք, վորոնք գտնվում են բնակավայրերից դուրս, ցուցակագրողին դժվարամատչելի տեղերում, բաց չթողնվեն: Այս բանն ապահովելու համար, այն անձինք, վորոնք չեն կարող ըստ իրենց գրավմանի տեսակի գրվել վորեւ բնակավայրում, որինակ՝ աշխատանքի գնացած վորսորդները, ձկնորսները, անտառում փայտ կտրողները և այլն, պետք է գրվեն վորպես ներկաներ իրենց մշտական բնակութեան վայրում: Այս գրութեանը սակայն չի տարածվում անասնապահների վրա, վորոնք ցուցակագրվում են իրենց քոչատեղերում (ձմեռանոց, Ղչաղ և այլն):

Այն անձինք, վորոնք ցուցակագրման տեղից ժամանակավորապես բացակա յեն և իրենց զբաղմունքի հետեանքով գտնվում են այլ բնակավայրում վորտեղ նոքա գիշերել են 17-ի դեկտեմբերի գիշերը, ցուցակագրվում են այդ բնակավայրում:

Ճանապարհին յեղած ժողովրդի մարդահամարի կարգը:

Այն անձինք վորոնք 16-ի լույս 17-ի գիշերը անց են կացրել ճանապարհին (գնացքներում, նավերում, կայարաններում գնացքներին սպասելիս, ցամաքային ճանապարհով ճամբորդելիս և այլն), պետք է ցուցակագրվեն այն բնակարաններում, վորտեղ նրանց կգտնի մարդահամարը: Ուստի ազգաբնակչութեան հարցաքննութեան միջոցին յեթե բնակարանում գտնվեն մարդիկ, վորոնք լույս 17-ի գիշերը չեն գիշերել այդ բնակարանում, ցուցակագրողը պետք է հարցնի՝ թե զրբանք այդ գիշերը չեն գտնվել ճանապարհին և դրական պատասխանի դեպքում կազմել նրանց համար անձնական թերթիկ:

Յեթե գյուղական բնակիչները, մարդահամարի նախընթաց օրը կամ մարդահամարի օրվա գիշերը դուրս են գնացել տնից բազար և այդ պատճառով տանը չեն գիշերել, ցուցակագրվում են իրենց մշտական բնակության տեղը: Թեկուզ և 17-ի ղեկտեմբերին տուն վերադարձած չլինեյին:

Ծանոթութուն. — Այն գյուղացիները, վորոնք լույս 17-ի ղեկտեմբերի գիշերը գիշերել են բազարում կամ իջևանում, այդ տեղերում նրանց համար հարցաթերթիկ չի լրացվում:

Այն յերկաթուղային ծառայողները (մեքենավար, հնոցպան, կոնդուկտոր, ուղղեկից և այլն), վորոնք իրենց պաշտոնական պարտականություններ կատարելիս լույս 17-ի ղեկտեմբերի գիշերը գտնվելիս են յեղել գնացքներում, մարդահամարի ժամանակ ցուցակագրվում են այն բնակարանի վրա, ուր նրանք մշտական ապրում են, թեկուզ նրանք դրանից դուրս գտնված լինեն և վերադարձած չլինեն նույնիսկ 17-ի ղեկտեմբերի առափոքր:

ՀԱՎԵԼՎԱԾ II-ՐԴ ՄԱՍԻ (ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ ԲԱՅԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՀԱՐՅԵՐԻՑ)

Համարակալման մասին (եջ 4 հրահանգի). —

Յեթե մի ցուցակագրողի չըջանի մեջ կան մի քանի բնակավայրեր, այդ դեպքում անձնական թերթիկների համարակալումը ամեն մի բնակավայրում տարվելու յև առաձին:

4-րդ հարցի առթիվ. —

Թեև ազգություն (народность) տերմինը գրված է

ազգաբնակչության ցեղական (ազգագրական) կազմի մասին անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով, բայց և այնպես իր ազգությունը վորոշելը թողնվում է իրեն հարցաքննվողին, վորով դրանցման ժամանակ չի կարելի հարցաքննվողի ցուցմունքները ձևավորել: Այն անձինք, վորոնք իրենց նախնիքների ազգության հետ իրենց կապը կտրել են, կարող են ցույց տալ այն ազգությունը, վորին ներկայումս իրենք իրենց հաշվում են: Այն դեպքում յերբ հարցաքննվողների ծնողները ցույց են տալիս մի ազգություն լիակ վորդին ուղում է ցույց տալ վոր ինքն պատկանում և ուրիշ ազգության, այն ժամանակ պետք է վորդուն մարդահամարի ժամանակ գրել այն ազգության վրա, վորն ինքն է ցույց տալիս:

5-րդ հարցի առթիվ. —

Խոսել չիմացող յերեխաների մայրենի լեզուն համարել մօր լեզուն: Խուլ և համբերի մայրենի լեզուն համարվում է այն լեզուն, վորով նրանք չըջապատողների հետ խոսելիս բացատրվում են:

7-րդ հարցի առթիվ. —

Յոթերորդ հարցին պատասխանելիս հարցման յեթարկվողն ինքն է վորոշում թե տվյալ վայրում մշտապես թե ժամանակավորապես է ապրում: Ժամանակավորապես ապրելը վորեւե ժամանակամիջոցով չի սահմանափակվում:

8-րդ հարցի առթիվ. —

Ընտանեկան զրույթյան հարցի պատասխաններում բացեր թողնելուց խուսափելու համար անհրաժեշտ է վորպեսզի ցուցակագրողներն լրացնեն տվյալ հարցը բոլոր անձնական թերթիկներում: Զգարմանալ վոր

ատիպված ենք փոքրահասակների համար նշանակել ամուրի:

9-րդ հարցի առթիվ —

9-րդ հարցը նկատի ունի կարգալ և գրել գիտե-
նալը միաժամանակ: Այն անձինք, վորոնք կարող են
միայն ստորագրել իրենց ազգանունը, բայց չեն կա-
րող կարգալ, գրադետներ կարգը դասվել չեն կարող
և ինչպես վոր անձնական թերթիկում հարցի դրվածից
եւ պարզ կերեա, այդպիսիներին պետք է ցուցակադրել
վորպէս բոլորովին անգրագետի:

**ՀԱՎԵԼՎԱԾ 3-ՐԴ ՄԱՍԻ (ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՅԵԿԱՄՈՒՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՅԵՎ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵ-
ՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ)**

Հարց 12-ի առթիվ —

Մասնավոր բնակարաններում ապրող զինվորական-
ների անձնական թերթիկների 12-րդ հարցը լրացնե-
լիս ցուցակադրողը չպետք է պահանջի վոր զին-
վորականն իր պաշտոնը մանրամասնորեն ասի: Բավա-
կան է նշանակել «հրամկազմ», «չարքային» բառերը:
Նույն հարցի «ձ» կետում գրել «զինվորական ծառա-
յության մեջ է» և չպահանջել ավելի մանրամասնու-
թյուն (որինակ զնդի անուն, հասցեն և այլն): Բանա-
կում ազատ վարձված ծառայողների համար հարց
12-ի «ա» կետում գրադմունքը գրվում է մանրամասնու-
թեն, իսկ «ձ» կետում միայն «զինվորական ծառայու-
թյան մեջ է» առանց մանրամասնության:

ՅԵԹԵ մի վորեւ տնտեսությանը (ծուխ) գյուղա-
կան տիպի է և միացնում է իր մեջ գյուղատնտեսու-
թյան զանազան հյուղերը (որ. հողագործություն,
հատուկ բույսերի մշակումը, կաթնատնտեսությունը

և այլն), և յերբ պատասխանելիս ցույց է տալիս
իր գրադմունքը գյուղատնտեսություն, այդ դեպքում
այդ ծուխին պատկանող անձնավորություններից չպա-
հանջել, վոր նրանք ցույց տան թե գյուղատնտեսու-
թյան հյուղերից վորն է գերակշռողը: Գյուղական
տնտեսության մեջ մասնագիտություն նշանակել վիճայե
այն դեպքում յեթե տնտեսությունն ամբողջովին
իրեն նվիրում է մի վորոշ հյուղի, որինակ՝ այգեգոր-
ծության, բամբակագործության, անասնապահության
և այլն: Վարձու բանվորների մասին պետք է նշանակել
նրանց գրադմունքի տեսակը. որինակ՝ հովիվ, նախրա-
պան և այլն:

Սեզոնային գրադմունքները, յեթե նրանք տեղա-
կան բնույթ են կրում և տարեց տարի կրկնվում են
պետք է հաշվի առնվեն անձնական թերթիկում, պետք
է ցույց տան իրենց ամառվա աշխատանքը (հողփորներ,
վորմնադիրները, ներկարարները, աստղծագործները և
այլն), թեկուզ և նրանք մարդահամարի ժամանակ գրադ-
ված չեն զրանով. ցույց տալ միևնույն ժամանակ 12-րդ
հարցի «ձ» կետում հիմնարկի, ձեռնարկի կամ հաստա-
տության անունը, վորտեղ հարցաքննվող անձինք վեր-
ջին սեզոնին ծառայել կամ աշխատել են, նշանակելով
նաև աշխատանքի տեսակը:

ՅԵԹԵ ամառվա սեզոնային գրադմունք ունեցողը,
մարդահամարի ժամանակ կունենա ուրիշ գրադմունք
(իր գյուղական տնտեսություն, ձմեռային բնակատե-
րություն և այլն), այն ժամանակ ամառվա սեզոնա-
յին գրադմունքը գրվում է նրա կամ վորպէս գլխավորը
կամ վորպէս յերկրորդական (կողմնակի) գրադմունք,
նայած թե նա գլխավորապէս ինչով է ապրում:

Այն դեպքում յեթե մեկը, զրւ լված է վորեւ ար-

Հետտով և միաժամանակ իր սեփական արտադրանքներն և վաճառում (որինակ՝ փուռ և հացի վաճառք, գլխարկի արտադրություն և գլխարկի վաճառք) պետք է անպատճառ դնեն յերկու զբաղմունքն ել («հացագործ» և «հացավաճառ», «գլխարկի արհեստանոցի տեր» և «գլխարկ վաճառող խանութի տեր»), վորոնցից մեկը նշանակվում է վորպես գլխավոր իսկ մյուսը վորպես յերկրորդական (կողմնակի), նայած թե հարցման յենթակայի կարծիքով, վորն ավելի յեկամուտ է բերում: Յեթե հարցման յենթական ղեկավարանում է վորոշել թե այդ զբաղմունքներից վորն է գլխավորը, այն դեպքում պետք է նշանակել արհեստը գլխավոր, իսկ վաճառումը վորպես յերկրորդական զբաղմունք:

Մարդահամարի կատարման աշխատանքներին մասնակցելը չպետք է «անձնական թերթիկում» ցույց տալ վուչ վորպես գլխավոր և վուչ ել յերկրորդական զբաղմունք, վորովհետև այդ չի կարող բնույթագծել հարցման յենթակայի ապրելու միջոցների աղբյուրը: Ինչպես յենթակայի ապրելու միջոցների աղբյուրը: Ինչպես ամբողջ ժողովուրդը, նույնպես և մարդահամարին մասնակցողները ցուցակագրվում են «անձնական թերթիկի» № 12-ից մինչև 15-ը հարցերից մեկում: Մասնավորապես մարդահամարին մասնակցող անգործները ցուցակագրվում են վորպես անգործներ:

Հարց 14-ի և 15-ի առթիվ.—

Այն ծծկեր յերեսաները և մանուկները, վորոնց ապրուստի համար տրվում է սնունդ կամ ապահովագրական գանձարկից նպաստ, պետք է ցուցակագրել «անձնական թերթիկի» 15-րդ հարցում: Հրահանգի յերրորդ մասի 14-րդ հարցի առթիվ տրված բացատրություններում նկատի յեն առնված այն անձինք,

վորոնց յերեսաների համար ստացած սնունդը հանդիսանում է նույնպես նրանց ապրուստի սեփական աղբյուրը (յեթե նրանք վորեւ ալ զբաղմունք չունեն վոր նրանց ապրուստի միջոց տար):

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ՅԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՀՐԱՀԱՆԳԻ

(ՁԵՎ № 8-ի)

ՀԱՎԵԼՎԱԾ 1-ին ՄԱՍԻ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԵՐԻ)

Հրահանգի № 2 կետի առթիվ.—

Ընտանիքը յերկու (կամ ավելի) մասերի բաժանվելու դեպքում, յուրաքանչյուրի համար կազմել առանձին ընտանեկան թերթիկ, թե չե՝ բնակելի տարածություն կեսը կը մնա առանց ցուցակագրվելու:

Հրահանգի № 4 կետի առթիվ.—

Ընտանեկան թերթիկում, ընտանիքի գլխավորի հետ գրվում են նաև այդ ընտանիքի անինքնագործ անդամները վորոնք մշտապես բնակվում են ուրիշ բնակավայրերում: Ընդհակառակ ընտանիքի անինքնագործ մասի համար թերթիկ լրացնելիս չեն գրվում ընտանիքի այն անդամները, վորոնք ապրում են ուրիշ բնակավայրում, վորովհետև ընտանիքի այդ մասի լրիվ խնամքի տակ ի հարկի չեյին կարող լինել:

Հրահանգի № 5 կետի առթիվ.—

Տվյալ վայրի մշտական ապրող բնակչությունը ամբողջապես հաշվի առնելու համար, ընտանեկան թերթիկներ կազմվում են նույնպես ժամանակավորապես բացակայող միայնակների համար: Այդպիսի անձերի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու յե բնակարանի տիրոջից, բնակարանի վարձակալից կամ թե չե մյուս

հարեաններէց, իսկ ժամանակավորապէս ներկա յեղուր
ընտանիքի անդամներն եւ միայնակներն համար ընտա-
նեկան թերթիկ չի կազմվում:

**ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՐԴ ՄԱՍԻ (ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆ-
ՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)**

Հարց 8-ի առթիւ .—

Այստեղ ցույց ե տրված բնակելի կացարանների բո-
լոր տեսակները, դրանց թվում նույնպէս «գորանոցային»
տիպի հանրակացարանում մի տեղ»: Ստացվում ե կար-
ծեցյալ հակասութիւն հրահանգի 3-րդ կետի հետ, վորն
ասում ե «ընտանեկան թերթիկներ չեն կազմվում հյու-
րանոցներում ե գորանոցային տիպի հանրակացարան-
ներում (հիվանդանոցներ, բանտեր, գորանոցներ, ման-
կատներ)»: Պետք ե ընդունել վոր հիշատակված հան-
րակացարանների տեսակները վորոնցում ընտանեկան
թերթիկներ չեն կազմվում համարվում են լրիվ, իսկ
մյուս բացի վերոհիշյալից բոլոր հանրակացարաններում
(բանվորական, ծառայողական ե այլն), կազմվում են
ընտանեկան թերթիկներ:

Հարց 13-ի առթիւ .—

Յեթե վարձակալը վարձել ե ամբողջ տունը, այդ
պէպքում նրա ընտանիքի բոնած տարածութեան համար
պետք ե նշանակել անվարձ, թեկուզ այդ վարձակալը
այդ տարածութեան համար ել վարձ վճարած լինի:

Հարց 14-ի առթիւ .—

Բնակելի տարածութեան վարձքը պետք ե գրել ա-
յնպիսի վարձք, առանց լրացուցիչ, կամավոր, նպա-
տակային ե այլ տուրքադրումների ե բ. հաշվել նոյեմ-
բեր ամսվա համար վճարելիք վարձքը, այլ վոչ թե փա-

տորեն այդ ամսվա մեջ վճարածը: Պետք ե գրել միայն
ընակարանի վարձակալների տված վարձքը (այսինքն
այն անձանց, վորոնք ընակարանը վարձել են տանտիրո-
ջից) ե այն ել իրենց վրա հաշված տարածութեան հա-
մար, վորն արձանագրված ե ընտանեկան թերթիկ 11-րդ
կետում (թեկուզ այդ տարածութեան մի մասը վարձա-
կալի կողմից յենթավարձակալների վարձու տրված
լինի), յենթավարձակալների կողմից վճարված վարձ-
քը հաշվի չի առնվում:

Հարց 17-րդ առթիւ .—

Այստեղ հարցը վերաբերվում ե այն տարածութեան,
վորն արձանագրված ե ընտանեկան թերթիկի № 11-րդ
կետում:

Վրիպակ .— Ընտանեկան հրահանգի (ձե № 8) եջ 2
տող 11 գրված ե 12-րդ, կարգով 21-րդ:

4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ՅԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԼՎԱԾԱԹԵՐԹԻ ՀՐԱՆՈՒԹԻ (ՁԵՎ № 9)

ՀԱՎԵԼՎԱԾ 1-ԻՆ ՄԱՍԻ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԻ)
№ 1 ԿԵՏԻ ԱՌԹԻՎ

Վորպէս առանձին կալված պետք ե ընդունել այն
չենքերը, վորոնք գտնվում են հասարակական ոգտա-
գործման վայրերում ե հատուկ ցանկապատով պատած
տնտեսող չունեն (որինակ՝ հրապարակի վրա գտնվող
յեկեղեցի), այդ պէպքում հոգամասի տարածութիւնը
ցույց չի տրվում, այլ գրվում ե «հրապարակի վրա»:
Յեթե հասարակական ոգտագործման վայրերում կա
չենքերի խումբեր, վորոնք ընդհանուր նշանակալթիւն
ունեն (որինակ անփոխադրելի առևտրական շենքերով
չուկա), չենքերի այդ խումբը պետք ե հաշվել մի կալ-

1003
1389

վածք, իսկ հողամասի տարածությունը նույնպես ցույց
չտալ:

Կալվածաթերթ կազմվում է նույնպես և նրանց հա-
մար, վորոնք քաղաքի ծայրերում տնտեսողեր ունեն,
բայց վորպես սովորական յերեւոյթ ցանկապատ չու-
նեն: Այս դեպքում հողամասի տարածությունը վորոշ-
վում է կալվածքի տերերի ցուցմունքով, վորոնք ցույց
են տալիս այն տարածությունը, վորն փաստապես ոչ-
տապործում են իրենց կարիքների համար, վորպես
տնտեսող:

Իսկապես հաշվառման պետք է յենթարկել միայն
այն անկառույց (незастроенные) հողամասերը, վորոնք
փաստորեն ցանկապատով, պլաներով կամ այլ միջոց-
ներով սահմանագծված են: Հաշվառումից դուրս համել
այն անկառույց կալվածները, վորոնք սահմանները հիշ-
ված ձևով չեն վորոշված, քեկուզ նրանք բռնված են
բանջարանոցներով կամ ապրանքների պահեստներով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՐԴ ՄԱՍԻ (ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԼՎԱԾԱԹԵՐԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹՎ)

Հարց 2 և 3-ի առթիվ .—

Այն քաղաքատարած գարձրած կալվածների հա-
մար, վորոնք լինի վարձակալության պայմանագրով,
լինի այլ տիպի գրավոր թե բանավոր պայմանագրով,
որված են ոգտապործելու կոմունալ տնտեսության կամ
թե նույնիսկ տնանց այգավիտի արված են վորեւ հիմ-
նարկի պետք է ցուցակագրել հետեյալ ձևով՝ 2-րդ հար-
ցի դիմաց գրել «կոմունալ տնտեսություն», իսկ 3-րդ
հարցի դիմաց ցույց տալ այն հիմնարկության, կազմա-
կերպության կամ անձի անունը, վորի ոգտապործման
ներքեւ է դանվում տվյալ կալվածքը:

Հարց 4-ի առթիվ .—

Այն կալվածները, վորոնք ունեն միայն քանդված
չավարտված կամ շինվող տներ ցուցակագրվում են վոր-
պես շինություններ ունեցող կալվածքի:

Հարց 8-ի առթիվ .—

Այս հարցը լրացնելու ժամանակ «շինվող» տներ
հաշվել այնպիսիները, վորոնք վրա 1926 թվի շինարա-
րական սեզոնին շինարարական աշխատանքներ են կա-
տարվել:

Հարց 9-ի առթիվ .—

Այս հարցի աղյուսակում չպետք է մացնել քան-
դված, չավարտված և շինվող շենքերը:

Աղյուսակի 2-րդ սյունակում, պատերի շինվածա-
նյութը, մանավանդ յերբ խառն նյութերից է շինված,
պետք է շատ մանրամասն կերպով ցույց տալ: Որինակ՝
«փայտե, մեջ աղյուսով լցված», «ներքեւ քարից վերեւ
փայտից», «փայտով, վրան ծեփած», և այլն:

Աղյուսակի վերջին սյունակը լրացնելու ժամանակ
շենքի ավարտման տարին հաշվել որացույցայինով և
վոչ թե տնտեսականով: Կառուցման թվականի մասին
նշումն կատարվում է այն տների վերաբերմամբ, վո-
րոնք հեղափոխությունից հետո յեն սկսել կառուցվել,
կիսաշեն մնացածները շինվել են կամ վերականգնվել են:

Հարց 10-ի առթիվ .—

Յեթե կալվածում բացի հիշատակված անասուն-
ներից կան նաեւ յեղ, գոմեշ, (արու և եղ) ցույց
տալ ամեն մեկից քանի հատ կա (չհաշվելով փոքրերը)
նշանակելով հարցի կողքերի ազատ տեղերում:

Հարց 11-ի առթիվ .—

ա) Պետք է ցուցակագրել վոչ միայն արդյունարե-
րական, այլ և առևտրական ձեռնարկությունները:

բ) Արդյունաբերական ձեռնարկներից նշանակել են միայն նրանց, վերոնք ունեն հատուկ սարքավորված կացարան:

Հարց 12-ի առթիվ. —

Դեպի դուրս յեւք (բնակելի կացարանի բնորոշումը) ստելով պետք է հասկանալ վոր նա՝ դուրս դալու հնարավորութիւնն ունի, առանց ուրիշի բնակելի կացարանի միջով անցնելու: Այդպիսով վորպէս առանձին բնակելի կացարան ցուցակադրվում են այն կացարանները, վորոնք անմիջապահորեն յեւք ունեն դեպի բակ կամ փողոցը, սանդուխի առաջամասը, հանդերձարանը (վեստիբուլ) և այլն: Այն բնակելի կացարանները, վորոնք գտնվում են հանրակացարանի տիպի տներում և յեւք ունեն դեպի ներսի միջանցքները հպեալք է հաշվել վորպէս առանձին բնակարաններ:

Հալիելում հրահանգի վերջի ծանոթութիւն:

Յեթե տարածութիւնները ցուցակադրելը վորոշված է քառակուսի արշիններով, իսկ հարցաքննողը պատասխանում է քառակուսի սմէկներով, ցուցակադրողը պետք է փոխադրի քառակուսի սմէկները քառակուսի արշինների և պատասխանը գրի քառակուսի արշիններով: Զի թույլատրվում սկազրութիւն համար քառակուսի սմէկները գրել:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԵՆՏՎԻՃՎԱՐԻ 3000 Տ.

